## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

**ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-26/28 >> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի**
**Գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ <<24>> մարտ 2026 թ. ժ.10.00
Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

Արա Ստեփանյան - աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

***Անդամներ***

*Քաջիկ Վարդանյան -աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ*

Վարդան Վարդանյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման , տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի առաջատար մասնագետ

Հայկ Գուլաբյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման , տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի առաջատար մասնագետ

Ջոն Վարդանյան - աշխատակազմի քարտուղարության ,անձնակազմի կառավարման , տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի երկրորդ կարգի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

**Մարիամ Գեղամյան-** աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Նիստի օրակարգ

1. Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2. Տեղեկություններ հայտերի գնահատման մասին
3. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների հետ փոխկապակցված անձանց ցուցակում ինչպես նաև երեք տարի ժամկետով գնումների գործընթացին մմասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու մասին.

1.Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին

1.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017թվականի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2.Տեղեկություններ հայտերի գնահատման մասին

2.1.Կապավոր ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և փաստաթղթերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան:

2.2.Նատալի Շին ՍՊԸ և Արտ Պլաս ՍՊԸ ՀԳ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և փաստաթղթերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան:

2.3 Բերմա ՓԲԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը , բացառությամբ առնվազն 2-րդ դաս շինարարության իրականացում ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) ներդիրի:

*2.4 Հիպերնովա ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը , բացառությամբ հրավերի հավելված 1.1՝ հավաստում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի ր կամ սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին փաստաթղթի:*

*2.5 Արհովշին ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը , բացառությամբ հրավերի հավելված 1.1՝ հավաստում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի ր կամ սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին փաստաթղթի:*

2.6 Եվրոբուդ Պլյուս ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը , բացառությամբ հրավերի հավելված 1.1՝ հավաստում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի կամ սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին փաստաթղթի:

2.7 Քանքարշին ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը , բացառությամբ հրավերով պահանջվոց լիցենզիաների և ներդիրների: Մասնավորապես ներկայացված ՔՊԼ-002342-09 սերիայի ներդիրը ըստ հսկիչ համարի փնտրման (verify.e-gov.am ) ներդիրը վավեր չէ, իսկ ՔՊՆ-001418-08 սերիայի ներդիրի լիցենզիան բացակայում է:

2.8 Էն Շին ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը , բացառությամբ մասնակիցը ներկայացրել է հրավերով պահանջվող ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) ներդիրը, սակայան բացակայում է համապատասխան ներդիրի լիցենզիան:

Մասշտաբ ՍՊԸ, Յան Բիլդինգ ՍՊԸ և Շին Մագիստրալ ՍՊԸ ՀԳ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը , բացառությամբ հրավերի հավելված 1.1՝ հավաստում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի ր կամ սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին փաստաթղթի:

2.10 Վանդոշին ՍՊԸ և Եվրոասֆալտ ՓԲԸ ՀԳ ներկայացված ներկայացված հայտի ապահովումը (հավելված 3) ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, Մասնավորապես՝ հրավերով սահմանված բանկային երաշխիքի համաձայն կոնսորցիումով հանդես գալու դեպքում պարտավորությունների կատարումը պետք է վերաբերվի կոնսորցիումի երկու անդամներին:

Սույն դեպքում թիվ Վանդոշին ՍՊԸ և Եվրոասֆալտ ՓԲԸ ՀԳ /կոնցորսիում/ -ի ներկայացրած հայտը ոչ թե առանձին-առանձին հայտեր են, որտեղ յուրաքանչյուրը հանդես են գալիս որպես առանձին մասնակից, այլ մասնակից է հանդիսանում Կոնսորցիումը: Թողարկված բոլոր բանկային երաշխիքներում որպես պրինցիպալ հանդես է եկել Եվրոասֆալտ ՓԲԸ-ն: Գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտով ներկայացված հավելված 1(դիմում հայտարարություն) , հավելված 2 (գնային առաջարկ) հանդես է եկել Վանդոշին ՍՊԸ և Եվրոասֆալտ ՓԲԸ /կոնցորսիում/ իսկ բանկային երաշխիքով հանդես է գալիս որպես առանձին Եվրոասֆալտ ՓԲ ընկերություն: Ըստ թողարկված բանկային երշխիքների Եվրոասֆալտ ՓԲԸ (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում է:

2.11 ՎՄՎ Քոմփանի ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և փաստաթղթերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան:

2.12 Վասպուրականի ՃՇՇ ՍՊԸ ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և փաստաթղթերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան:

3. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների հետ փոխկապակցված անձանց ցուցակում ինչպես նաև երեք տարի ժամկետով գնումների գործընթացին մմասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու մասին.

Կապավոր ՍՊԸ, Արհովշին ՍՊԸ, Հիպերնովա ՍՊԸ, Բերմա ՓԲԸ, ՎՄՎ Քոմփանի ՍՊԸ, Մասշտաբ ՍՊԸ, Յան Բիլդինգ ՍՊԸ, Շին Մագիստրալ ՍՊԸ, Եվրոբուդ Պլյուս ՍՊԸ, Վասպուրական ՃՇՇ ՍՊԸ-ն, Նատալի Շին ՍՊԸ, Արտ Պլաս ՍՊԸ էն Շին ՍՊԸ, Քանքարշին ՍՊԸ-ները Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների հետ փոխկապակցված անձանց ցուցակում ինչպես նաև երեք տարի ժամկետով գնումների գործընթացին մմասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված **չեն**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

**Հանձնաժողովի կայացրած որոշումները**

**Հանձնաժողովը որոշեց**

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 41-րդ կետը գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և մասնակիցների ծանուցել առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:
2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակոտով Վանդոշին ՍՊԸ և Եվրոսաֆալտ ՓԲԸ ՀԳ հայտը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել:
3. ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-26/28 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստ հրավիրել 2026 թվականի մարտի 27-ին ժամը 10.00-ին

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ---------- Արա Ստեփանյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ ---------- Քաջիկ Վարդանյան

---------- Վարդան Վարդանյան

---------- Հայկ Գուլաբյան

---------- Ջոն Վարդանյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Մարիամ Գեղամյան